

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ**

**ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ**

**Յ. Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՄԵԴԱԼՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 55-րդ հոդվածի 16-րդ կետով և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության պետական պարգևների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը՝ **ո ր ո շ ու մ ե մ**.

Հանրապետության տոնի կապակցությամբ, մատաղ սերնդի կրթության և դաստիարակության, ինչպես նաև ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման գործում ներդրած նշանակալի ավանդի համար «Գյումրու աթլետիկայի մանկապատանեկան մարզադպրոց»-ի տնօրեն Յաշա Անուշավանի ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ պարգևատրել Մովսես Խորենացու մեդալով:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ**

 **Ս.ՍԱՐԳՍՅԱՆ**

2014թ. Մայիսի 23  
Երևան  
ՆՀ- 130 -Ա